Ալեքսանդր Ծատուրյան

Առավոտյան երգ

Ե՛վ այսօր փայլեց առավոտս ուրախ,
Ես ողջունեցի գարնան արշալույս.
Ձեռք առա քընար՝ երգելու անվախ
Քաղցր զեղմունքը սիրահար հոգուս:

Եվ ինձ յուր անշեջ, դյութիչ հայացքով
Նորից փաղաքշեց կենսատու արև.
Սլացավ զեփյուռն ականջիս մոտով
Եվ ես լսեցի. «Բա՛րև քեզ, բա՛րև…»

Եվ թռչունների անթիվ երամներ
Ճախրելով շուրջըս՝ ինձ ավետեցին
Նորից քաղցրը լույս, քաղցրը երազներ,
Եվ պայծառ վիճակ իմ մատաղ կյանքին:

Հրճվիր, դու ազատ, սիրտ իմ սիրավառ,
Վայելի՛ր կյանքի բուռն քաղցրություն.
Հրճվի՛ր, քանի քեզ ժպտում են պայծառ
Ե՛վ անամպ երկինք, և ճոխ բընություն…

Անվերջ չէ գարուն… Կըգա ցուրտ ձմեռ,
Կըթոշնի վարդը, կըլռի սոխակ.
Եվ այնուհետև մնա՛ք բարյավ և՛ սեր,

Ե՛վ անվերջ զգված ցընորք ու տենչանք...

1889, 5 փետրվարի

Մոսկվա